

Լեւոնի անհարազատ զաւակներու մասին խօսելու համար հարկ կը դրամ նախ մի քանի տող նուիրել անոր ներքին կեանքին :

Լեւոն ի բնէ եկեղեցասէր եւ մանաւանդ մոլեռանդ կաթողիկ մը եղած է , ինչպէս տեսանք իր թագաւոր օժման օրը : Այս հանգամանքին շնորհիւ է որ ան կրցաւ Եւրոպայի վեհապետներուն գոթը չարժել եւ այս միջոցով ահագին հարստութիւն մը զիջել : Զանազան պատմիչներ՝ ինչպէս Walsingham, Evesham, Buchon եւ ուրիշներ կը քնն թէ Լեւոն Եւրոպայի մէջ աւելի՛ հարուստ եղաւ քան ինչ որ էր իր թագաւորութեան ժամանակ : Ասիկա զրպարտութիւն մը չէ , Երբ Լեւոն Պարիսի մէջ վերջնականապէս հաստատուեցաւ եւ պարիսուհիներու հետ մօտէն մտերմական յարաբերութիւններ հաստատեց , այլ եւս « մնաս բարո՛վ , Հայաստա՛ն . . . » : ալ ո՞վ պիտի մտածէր Հայաստանի մասին , քանի որ փառաւոր եւ հեշտ կեանք մը ապրելու համար ո՛չ մէկ բան կը պակսէր իրեն . պաաիւ՛ կար , զրամ՛ կար , կնիկ՛ կար . հոս իր գոյնը բոլորովին գուրս տուաւ , եւ զիգուած հարստութիւնն սկսաւ վասնել աջ ու ձախ , անհաշիւ կերպով , առանց խնայողութեան ու մտածման : Երբ մէկ կողմէ պարիսուհիներու հետ կը զուարճանար , միւս կողմէ ալ իր մեղքերը քաւելու համար եկեղեցիներու նուէրներ կուտար . նոյն իսկ իր հոգիին փրկութեան համար աղօթել տալու պաշտօնով երկու կրօնաւոր վարձեց ու հաստատեց Կեղեստինեանց վանքին մէջ , հոգաւորով անոնց ամէն պէտքերը(1) : — Պարիսի Ա.գգ. Դիւանարանի ձեռագիրներէն S 3801 , թղ. 125 ք , արձանագրելով այս վերջին ըսածս՝ կաւելցնէ , թէ նոյն երկու կրօնաւորներու պահպանման համար կալուածներ վնուեցան եւ Լեւոնի մեռնելէն հարցն Անգլիայի Հոփքարդ թագաւորին կողմէ արուած նուէրներով անոնց ապրուստն ապահովուեցաւ : Իսկ ուրիշ ձեռագիր մը , K , 168 , 14 , որ պաշտօնական խումբ մը գրութիւններու բնագիրներն ու պատճէնները պարունակող հաւաքածու մըն է , կը հաստատէ թէ Ֆրանսայի թագաւորն ալ մեծկակ նուէր մը տուած է նոյն նպատակին համար : Հոն Կարոլոս կըսէ . « Մեր յոյժ սիրելի բարեկամ եւ եղբայրակից Լեւոնի՛ բարեյիշատակ հանգուցեալ Հայոց նախկին թագաւորին . . . հոգիին համար կուղենք Կեղեստինեանց վանքի մեր սիրելի կրօնաւորներուն տալ 2000 ֆրանկ , որուն տարեկան [եկամուտ կամ տոկոս] 200 ոսկին գործածուի նոյն եկեղեցիին մէջ մշտական երկու կրօնաւոր պահելու նպատակին ,

(1) Ապացոյց որ Լեւոն Հայաստանի մասին չէր մտածեր այլ եւս , իր կտակին մեջ բա՛ն մը չէ ըսած այդ մասին , մինչդեռ իր ժառանգին եւն. չէ մոռցած յիշատակել եւ անոնց գումարներ բաշխել :